ՀԱԼԱԼ ՄԱՐԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի մարթ ու մի կնիկ են ըլըմ։ Կնիկը մարթին հվատացնըմ ա, որ՝ ինձ պես հալալ կնիկ չկա ըշխարըմը։ Որցակը որ հավի կուշտն ա գնըմ, սհե էրեսը շալով ծածկըմ ա (ինքը երեսը շալով ծածկելով՝ ցույց է տալիս)[1], որ մթամ ամոթ ա։ Հմա, որդի, մարթի կշտին ա տհենց անըմ։
Մարթն էլ գնըմ ա մարթկերանց կշտին պարծենըմ, թե.— Իմ կնգա պես ըշխարի ու ֆողի ըրեսին հալալ կնիկ չկա։
Մի տղա ընդհան դովթալաբ ա ըլըմ, ասըմ ա.— Արի մարջ գանք՝ ես քու աչքի ըղաքին քու կնգա տեղը մտնիմ։
Ասըմ ա.— Տհենց բան չի ըլըլ, ախպեր, թե տհենց բան ըլի, իմ ապրուստը քի հալալ, հմա իմ կնիկը տհե բան չի անիլ։
Էնա ասըմ ա.— Ախպեր, գնա քու կնգանը հվատացրու, թե մթամ էս քշեր տեղ ես գնըմ։ Եդնա արի փասարը պհե, տես տեղն եմ մտնը՞մ, թե՞ չէ։
Ենա էն մարթը գնըմ ա, ըռավոդը ձին սարքըմ։
Կնիկն ասըմ ա.— Ո՞ւր ես գնըմ։
Ասըմ ա.— Էս կռան գեղերի վրա գնըմ եմ, իրեք օր կեդանամ։
Ենա կնիկն արխեինանում ա։
Ըրիգունը մթնըմ ա թե չէ, թաքուն եդ ա գալի, բաղը դռան ըղաքին ա ըլըմ, ձին ընդի կապըմ ա, ինքը փասարը պհըմ։ Հլե մին էլ տենըմ ա՝ էն մարջ ունող տղեն էկավ, արխեյին գնաց, ոնց որ սովոր ըլի, մտավ տեղը։ Եդնա տեղիցը թուրքեվար ասըմ ա.— Յախշի բախ, գյորեր սան (լավ մտիկ արա, տենըմ ես)։
Էնա էդ տղեն մարջը տանըմ ա։ Էդ եղատարն ըսկի տուն էլ չի գնըմ, ձին էլ նհե կապած թողըմ ա (քար ընկնի նրա գլխին), հլե նհե դառդակ վի ա կենըմ, գնըմ ա։
Գնըմ ա տենըմ, որ մի կնիկ էլ, անդեր կնիկ ա ըլըմ, դառ ու դառտակ նստած։
Ասըմ ա.— Դուն ինձ կնիկ, ես քի մարթ։
Եդնա էն թազա կնգա հետ մսլահաթ են անըմ, ասըմ ա.— Գնամ մի տեղով, բալի փող աշխատեմ։
Գնըմ ա։ Տենըմ ա՝ հրես մի էրկու մարթ էլ են գնըմ։
Ասըմ ա.— Ո՞ւր եք գնըմ։
Ասըմ են.— Գնըմ ենք ըշխատելու։
Ասըմ ա.— Դե էրկուսը չըլինք, իրեքն ըլինք։
Վի են կենըմ, գնըմ են։ Ըշխատըմ են։ Էն էրկուսն իրանց ըշխատանքն ուտըմ են, նա ղայիմ պհըմ ա։
Եդ գալու վախտը՝ ճամփումն ասըմ ա.— Հլա էկեք տենանք՝ ամենքս ինչքան ենք ըշխատել։
Էնա տենըմ ա, որ նհանք մի բան էլա պհել չեն։
Նհանք տենըմ են, որ իրանք սևերես են գնըմ, մսլահաթ են անըմ, ասըմ են.— Բա սա փող տանի, մենք դառդակ, ու սա մեզ վրա ծիծաղի՞։
Մի ծառի տակի ոտը կտրըմ են, փողը խլըմ, իրանք գնըմ են։
Էն կնիկը գալիս ա հարցնում, ասըմ ա.— Բա իմ մարթն ի՞նչ էլավ։
Ասըմ են.— Նա ջոգ ճամփով գնաց, մենք՝ շոգ, մենք ի՞նչ գիդենք՝ ինչ էլավ։

---

[1] Բացատրությունը բանահավաքինն է—Ծ. Կ.։

Լացդիամաթ անըմ ա.— Ա սևասրտեր, բա ձեզ հետ գնաց, ի՞նչ էլավ իմ մարթը (նաչարն անշաղ մի մարթ էր ճարել)։
Ասըմ են.— Տեհել չենք։
Էն նաչարն էլ էն ծառի տակին լաց, ղիամաթ անըմ ա, մխկըտըմ ա, մխկտըմ ա, մնըմ ընդի։
Մի սելվոր գնալիս ա ըլըմ, ասըմ ա.— Ձեզ մատաղ ըլիմ, էսա ես էլ կարալ չեմ իմ տուն գնամ, ինձ գոնյա մի ըշխարի վրա էլա տարեք, բալքի մի ապրուստ գդնում։
Տանըմ են մի ըշխարըմը վե բերըմ։ Ընդի նա մի դուքան ա բաց անըմ, օքութ ա անըմ, կնգանն էլ բերըմ ա կուշտը, տհե ապրըմ են։
Շատ են կենըմ, քիչ, էն ոտը կտրողնին եդ քյասիբանըմ են, գնըմ են էն քաղաքը, էն ոտը կտրած մարթի դուքանում նոքար են դառնըմ։ Իրանք ճնանչըմ չեն, համա դուքանչին էլ, իրա կնիկն էլ ճնանչըմ են։ Բան չեն ասըմ։
Մի իրեք տարի կենըմ են, եդնա ասըմ են.— Դե մեր հախը տուր մենք գնանք։
Կնգանն ասըմ ա.— Գնա էդ մարթկերանց հախը տու, թող գնան։
Կնիկը գնըմ ա հախներուն բոլ-բոլ տալիս ա, հետներուն գուլպա գործելով տանըմ ա չկել քաղաքի ղրաղը՝ ճամփու դնըմ։
Ընդի ասըմ ա.— Բա ըմաչեիք ո՞չ, որ փողի հմար իմ մարթի ոտը կտրեցիք, հմի էլ էկել եք եդ նրա դուռը նոքարութին անըմ։
Ասըմ են.— Թե մենք խարաբ ըլինք, էս գեդինը ճղվի— մենք մեչն ընգնինք։ Հլե մին էլ էն կնիկը տենըմ ա, որ գեդինը ճղվեց, նրանք մեչն ընգան, եդ գեդինը իրար էկավ։
Գալիս ա մարթին ասըմ ա։
Մարթն ասըմ ա.— Էս իրեք տարի ա՝ ես ասի ոչ, դու խի՞ ասեիր, ջհանդամն իրանց գլուխը, թող իրանց քուլփաթն էլա պհեին։
Կնիկն ասըմ ա.— Շատ էլ լավ արի, վայ տամ նրանց գլխին, թող նրանց կնանիքն էլ ինձ նման յանա-յանա ճամփա պհեն։
Ամեն գեշ մարթի հմար էլ տհենց գեդինը ճղվիլ տի՝ մեչն ընգնի, որ աշխարը հլալվի։